ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.06.2020թ.

Մ Ի Ջ Ա Ն Կ Յ Ա Լ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, քննարկելով «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից 17.04.2020թ. ներկայացված բողոքի վարույթը վերսկսելու հարցը՝

ՊԱՐԶԵՑԻ

«Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դերձակի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում 17.04.2020թ. ներկայացվել է բողոք:

Բողոքի օբյեկտիվ քննության անհրաժեշտությունից ելնելով և հաշվի առնելով «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից ներկայացված միջնորդությունը և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 17-րդ կետը՝ 05.05.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից որոշում է կայացվել փորձաքննություն նշանակելու վերաբերյալ, որի կատարումը հանձնարարվել է «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 18.05.2020թ. որոշմամբ «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից ներկայացված և 17.05.2020թ. վարույթ ընդունված բողոքի քննությունը կասեցվել է մինչև «Փորձաքննությունների

ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից համապատասխան փորձագիտական եզրակացության տրամադրելը:

04.06.2020թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքների քննող մարմին ստացվել է «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 27.05.2020թ. թիվ 20-0044Պ փորձագիտական եզրակացությունը և համակարգչատեխնիկական փորձաքննության թիվ 20-0044Պ «Փորձագետի եզրակացության» վերաբերյալ տրամադրված համապատասխան ստորաբաժանման ղեկավարի պարզաբանումը:

Այսպիսով՝ սույն բողոքի վարույթի կասեցումն առաջացրած հանգամանքները վերացել են, ուստի՝ գործի վարույթը ենթակա է վերսկսման:

Ելնելով վերոգրյալից՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 կասեցված վարույթով բողոքի վարույթը վերսկսել և նշանակել նիստ, որը տեղի կունենա 10.06.2020թ. ժամը 09:50-ին, ք. Երևան, Կոմիտաս 54բ հասցեում, 1-ին հարկի դահլիճում, այդ մասին տեղյակ պահելով կողմերին:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**